

ՀՀ Ա.Ա. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
ԳՆԴԱՊԵՏ՝ Է . Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Քաղաքացի՝ Հարություն Մարտի Գալենցի կողմից

Էլ. հասցե: archigalenz@gmail.com

Կայքէջ՝ www.galenz-research.org ; www.InteriorDasein.de

Հեռ.: + 49 179 547 5312 (Բեռլին, Գերմանիա); + 374 9 (0)99 919 818 (Երևան)

Ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Բելինսկի 2

ՀԱՂՈՐԴՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Դիմում եմ Ձեզ ոչ միայն որպես քաղաքացի, այլ նաև որպես արվեստագետ, ով ունի երեսուն տարվա միջազգային և հայաստանյան գեղարվեստական նախագծերում ցուցադրվելու և ցուցահանդեսներ կազմակերպելու փորձ, հայ մշակույթը զարգացնելու համար արժանացել եմ «Արշիլ Գորկու» շքամեդալի:

Բեռլինի արվեստների համալսարանն ավարտելուն պես 2000 թ.-ին, առաջնային մտահոգությունս է եղել խորությամբ ուսումնասիրել թե՛ հայկական արդի և դասական կերպարվեստը, թե՛ Կալենցների տոհմի գեղարվեստական ժառանգությունը: Այդ ուղղությամբ կազմակերպել եմ բազմաթիվ ցուցադրություններ, պատկերագրքեր կազմել, դասախոսություններ վարել, հոդվածներ հրատարակել Սփյուռքի և Հայաստանի հանդեսներում, պարբերականներում: Հայկական արվեստի հետ սերտ առնչվել ու համագործակցել եմ, իսկ 2008 թ-ից Բեռլինում ցուցասրահ եմ բացել, որտեղ կազմակերպել եմ 20-ից ավել ցուցահանդեսներ՝ նվիրված հայ կերպարվեստին, բազմաթիվ ծրագրեր եմ ներկայացրել այլ վայրերում՝ որպես հրավիրված արվեստագետ եւ համադրող:

Կալենցների թողած ժառանգությունն ամբողջ Եվրոպայում, ԱՄՆ-ում, որպես Հայկական մշակույթի այցեքարտերից մեկն են համարվում: Այդ ժառանգությունը, որ 1000-ից ավելի արվեստի կտորներ և պատմական կարևոր իրեր է պարունակում, այսօր պատանդ է վերցված հանցագործ խմբի կողմից: 2017-ին մահացած հորս՝ արվեստագետ Սարո Գալենցի ստորագրությունը կեղծելով և օգտագործելով բարձր պաշտոն ունեցող անձանց հետ իրենց ծանոթությունները, արվեստից անտեղյակ անձերը վտանգում են ազգային բարձր արժեք ունեցող ստեղծագործությունների ապագան:

Հարգելի պարոն Մարտիրոսյան, դիմում եմ անձամբ Ձեզ, քանի որ երկուսուկես տարի պայքարելով և բոլոր օրինավոր միջոցները օգտագործելուց հետո, կանգնել եմ փաստի առաջ՝ մեր օրենքները մեծամասամբ թերին են մշակութային նուրբ հարցերի ղեկավարման ոլորտում, սակայն դրանք կիրառելի են խարդախություններն օրինականացնելու անպատիվ գործերի համար: Մեր հանրապետության արդարադատությունը գործում է ոչ թե հանցագործությունը բացահայտելու և արդարադատությունը վերականգնելու նպատակով, այլ անհատ պատվիրատուներին ծառայություններ են մատուցում հասարակության շահերն հակառակ:

Հորս՝ Սարո Գալենց Հարությունի մահից հետո, համաձայն օրենքի, հորս երկրորդ կինը՝ Լարիսա Կատասանովան և նրանց դուստրը՝ Արմինե Գալենցը, ես և քույրս՝ Անի Նիկոլ Գալենցը, համատեղ ընդունել ենք հորս ժառանգությունը և դարձել Երևան քաղաքի Կալենցի անվան փողոցում գտնվող թիվ 18 և 18/1 տան բաժնային սեփականատերերը:

2010 թ.-ից այդ տանը գործել է նաև Կալենցի տուն-թանգարանը, որը, ցավոք, օրենքին և միջազգային ընդունված ստանդարտներին համապատասխան գրանցված չի եղել: Չնայած 6 տարի շարունակ 4 աշխատատեղի համար աշխատավարձ է տրամադրվել այն ժամանակվա ՀՀ Մշակույթի նախարարության կողմից, երբեք չի ունեցել թանգարանին պատկանող արվեստի նմուշների ցուցակ, հավանաբար անթափանց կոռուպցիոն սխեմաների մեջ ներգրավված լինելով: Այդ տանն է գտնվում նաև հորական կողմից իմ տատ ու պապի՝ Հարություն և Արմինե Կալենցների ողջ գեղարվեստական ժառանգությունը, իմ և քրոջս՝ Անի Նիկոլի, մորս՝ Նազելի Նիկողոսյանի և մորական պապիս՝ հայտնի քանդակագործ Նիկոլայ Նիկողիսյանի որոշ նշանավոր արվեստի գործեր, նաև արվեստի իմ հավաքածուից մի շարք կտավներ: Այդ տունը կառուցել է մեր ընտանիքը՝ երեք սերունդ շարունակ: Տուն-թանգարանը մեր ողջ ընտանիքի նպատակն էր:

Բազմիցս ժառանգորդներին առաջարկել եմ միասին արվեստի բարձր արժեք ունեցող գործերը և պատմամշակութային կարևորություն ունեցող առարկաները ցուցակագրել, սակայն առաջարկս մերժվել է, ստիպված 2017 թ.-ի նոյմբեր ամսվա կեսերին դիմել եմ Արաբկիրի նոտարական գրասենյակի նոտարին՝ Սուսաննա Դանիելյանին, որպեսզի օրենքի սահմանված կարգով տուն- թանգարանում կատարվի ներկա գտնվող նկարների գույքագրում:

Լ. Կատասանովան, ով Սարո Գալենցի հետ օրինական ամուսնացել է հորս մահից երկու տարի առաջ, արգելել է նոտարի մուտքը տուն-թանգարան՝ չնայած այն հանգամանքին, որ ինքն էր նոտարի հետ պայմանավորվածություն ձեռք բերել, որ երեկոյան աշխատանքային ժամից հետո նոտարը ծանոթանա գույքագրման ծավալին և պայմաններին: Իրավունքներիս

պաշտպանության նպատակով դիմել եմ դատարան՝ գույքագրման խոչընդոտները վերացնելու պահանջով:

Թիվ ԵԱՔԴ /4697/02/17 քաղաքացիական գործով հայցապահանջը բավարարվել է:

Կատասանության կողմից բերվել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է: 2018 թ.-ի սեպտեմբեր ամսից գործը գտնվում է վճռաբեկ դատարանում: 2019 թվականի մարտ ամսից վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել՝ Կատասանության կողմից բողոքը մերժելու մասին, այսինքն՝ երրորդ անգամ հաստատվել է, որ արվեստի գործերի ցուցակագրումն անխուսափելի է սակայն մինչ օրս գույքագրում չի կատարվել, քանի որ գործը գրեթե մեկ տարի անհրճադատ գտնվում է վճռաբեկ դատարանում, ինչի հետևանքով առաջին ատյանի դատարանի կողմից ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայություն կատարողական թերթ չի ուղարկվել, որպեսզի նոտարը կարողանա մուտք գործել տուն- թանգարան՝ գույքագրում կատարելու:

Իմ ընկալմամբ, Լ. Կատասանության և նրա «հովանավորները» փորձում են գործը հնարավորինս ձգձգել, որպեսզի նոտարը հնարավորինս ուշ կատարի կամ նույնիսկ չկարողանա կատարել գույքագրում և արվեստի նշանավոր գործերի ցուցակագրումը:

Դիմում եմ Ձեզ երկար մտածելուց հետո և ինչպես նշեցի, երկար ամիսներ արդարադատություն սպասելուց թե՛ ոստիկանությունից, թե՛ քննիչական կոմիտեից, թե՛ դատախազությունից, թե՛ հարկադիր կատարողներից:

Իմ գործով ակնհայտ դարձավ, որ «վերնից» առկա է ճնշում, և մշակութային ժառանգության հարցում շարունակվում է տիրել անթափանցիկությունը և կողմնապահությունը:

Թույլ տվեք ծանոթացնել Ձեզ մանրամասներին:

Ինձ համար արդեն զարմանալի է և ոչ տրամաբանական, որ ժառանգված գույքը ապահովվելու համար հնարավոր չէ նոտարի հրատապ այցը և բնակավայրի կամ թանգարանի դռների կնքումը: Նոտարին կարելի է մերժել մուտք գործել տվյալ տարածք, ոստիկանին կարելի է ստել, հարկադիր կատարողին կարելի է արհամարել և պատասխանել, թե ըստ օրենքի հնարավոր է դատարան դիմել համաձայն չլինելու դեպքում: Այսպիսի թերությունների մասին կարելի է մամուլում հողված գրել և միզուցե հասարակական քննարկման առարկա դարձնել, բայց Ձեր ուշադրությունը չենք շեղի նման հարցերի վրա:

Միայն թե երբ քրեական գործ է հարուցվում խոշոր հանցագործության վերաբերյալ և իրար հետևից քննիչներ են փոխվում՝ որպեսզի ամիսներ անց գործը «ցրվի» և նույնիսկ գրավոր պատասխան լույս աշխարհ չգա ու հնարավոր չլինի քայլեր կատարել, ապա դա արդեն երկրի կառավարությանն արժանի խնդիր է: Քանզի բացասական համբավ է թողնում ՀՀ քննչական և արդարադատական կառույցների անկողմնապահ և պրոֆեսիոնալ աշխատանքի վրա:

Նոտարի մուտքը խոչընդոտելու գործի շրջանակներում տեղեկացա, որ հայրս արվեստի իր բոլոր աշխատանքները նաև իր ծնողների՝ Հարություն և Արմինե Կալենցների արվեստի գործերը և թանգարանի մաս կազմող պատմամշակական առարկաները իբրև թե նվիրել է եղբորը՝ Արմեն Կալենցին:

Հորս մահից 4 ամիս անց, 2018 թվականի փետրվարին Կատասանվայի կողմից անփույթ մի թղթակույտի պատճեն է ներկայացվել դատարան:

Իմ համոզմունքով իբր նվիրատվությունը հաստատող շինծու թղթակույտը (այն կազմված է ոչ ճիշտ ձևով, հապճեպ և, կարևորը, վավերացված չէ նոտարի կողմից կամ Սարո Գալենցի ձեռքով արված առանց որևէ գրության), որևէ տրամաբանական հիմք չունի և իհայտ է եկել, համոզված լինելով, որ մինչ թափշյա հեղափոխությունը՝ համակարգը ընդունակ էր բոլոր պատկերացվող հանցագործությունները քողարկելու ճիշտ կոռուպցիոն կապեր և բավականին ջանքեր ներդնելու դեպքում: Այդ թղթակույտը ի հայտ է եկել հորս մահից չորս ամիս հետո և ներկայացվում է այնպես, կարծես թե այն կազմվել է հորս կյանքի օրոք՝ իր մահից մեկ տարի առաջ: Այս «փաստաթուղթը» ներկայացվել է դատարանում իբրև հիմք ժառանգության գույքագրումը արգելափակելու համար: Այդ «նվիրատվության» պատճեն ուսումնասիրելուց միանգամից աչքի է ընկնում, որ դա շինծու է և հապճեպ է կազմվել: Իմ և քրոջս իրավունքները պաշտպանելու նպատակով դիմել եմ ոստիկանություն՝ հորս ստորագրությունը կեղծելու կասկածով և քրեական գործ հարուցելու պահանջով: Ցույց տալով ներկայացված բազմաէջանոց «նվիրատվության պայմանագիր» գրաֆոլոգային փորձագետների ՌԴ-ի և Գերմանիայի դաշնության, ստացել եմ պատասխան, որ պարզ մի քանի գծիկները, որոնք ներկայացվում են իբր հորս ստորագրությունը, դրված են անձանթ ձեռքով և հորս չեն պատկանում: Մական այդ փաստը չեմ կարող խաղարկել Հայաստանի Հանրապետությունում, քանի որ մեր օրենսդրության համաձայն փորձագետը սուտ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության է ենթարկվում մեր օրենքի համապատասխան:

2018 թ.-ի սեպտեմբերի 22-ին ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական Ռ. Ս. Հակոբյանի կողմից որոշում է կայացվել թիվ 14174818 քրեական գործով վարույթը կարճելու մասին, որի պատճեն բազմաթիվ պահանջներից հետո իմ փաստաբանին տրամադրվել է 2018 թ.-ի նոյեմբեր ամսին:

Որպես գործը կարճելու հիմք առաջ է քաշվել պատճառաբանություն, որ փորձագետները չեն կարող եզրակացություն անել նվիրատվության փաստաթղթի իրական կամ կեղծ լինելու մասին, քանզի հորեղբայրս՝ Արմեն Կալենցը չի թույլատրել, որպեսզի դատական փորձագետը պայմանագրի տարբեր տեղամասերից թղթի մասնակի վնասման եղանակով վերցնի նյութի՝ թղթի, թանաքի նմուշներ, որպեսզի որոշվի պայմանագրի վաղեմությունը: Քննիչի կողմից փորձագետին չի տրամադրվել նաև Արմեն Կալենցի ստորագրության նմուշները, որպեսզի պարզվի Սարո Գալենց տպագիր գրառմամբ անուն ազգանվան դիմաց առկա ստորագրությունները կատարված են Արմեն Կալենցի կողմից, թե մեկ այլ անձի կողմից: Այստեղ տրամաբանական հարց է ծագում, թե ո՞րն է այդ մերժման պատճառը և ինչու՞ է Արմեն Կալենցը հրաժարվում փաստաթուղթը ենթարկել փորձաքննությանը, եթե այն իսկապես բնօրինակ է, այլ ոչ թե կեղծված մի թուղթ, և ինչու՞ է Արմեն Կալենցը հրաժարվում օրենքին համաձայն և արդար եղանակով հանգուցալուծել այս հարցը:

Շուրջ 2 ամիս անց որոշումը ստանալուց հետո այն 2018 թվականի դեկտեմբերի 03-ին բողոքարկվել է ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ – Զեյթուն վարչական շրջանների դատախազություն :

07. դեկտեմբեր 2018 թվականին ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ – Չեյրուն վարչական շրջանների դատախազի ժամակակալոր պաշտոնակատար Ա. Առաքելյանի կողմից բողոքը մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ անհիմն է:

Դատախազության կողմից միտումնավոր քննարկման առարկա չի դարձվել այն հանգամանքը, որ փորձաքննությունն ամբողջական չի իրականացվել և երկրորդ փորձաքննություն չի նշանակվել:

Քննարկման առարկա չի դարձվել նաև այն հանգամանքը, որ գործը / ինձ անհասկանալի պատճառով/, գտնվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի բոլոր քննիչների վարույթում, ինչի արդյունքում կատարվել է թերի քննություն, կամ հանցագործությունը չբացահայտելու նպատակով միտումնավոր մակագրվել է տարբեր քննիչների, վերջիններս էլ գործի նյութերին առանց ամբողջական ծանոթանալու՝ ճիշտ ընթացք չեն տվել կամ միտումնավոր հացագործությունը քողարկել են, քանի որ բանավոր ասում էին, որ Արմենը ԱՄՆ քաղաքացի է, ոչինչ անել չեն կարող:

Քրեական գործի վարույթը կարճող քննիչի կողմից բացարձակ քննություն չի կատարվել, այլ ընդհամենը որոշում է կայացվել: Անհասկանալի է, ինչպես կարող է որոշում կայացվել մի քննիչի կողմից, ով քննություն չի իրականացրել:

2018 թվական հունիսի 26-ին ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին հաղորդում եմ ներկայացրել, որ հանդիսանալով Երևան քաղաքի Կալենցի փողոցի 18 և 18/1 հասցեում գործող տուն թանգարանի բաժնային սեփականատեր չեմ կարողանում մուտք գործել, քանի որ Լարիսա Կատասանովան խոչընդոտում է՝ մասնավորապես գողեղով դարպասայա դուռը, փոխելով փականի միջուկը խնդրելեմ ոստիկանության աջակցությունը:

Անհերքելի ապացույցներից և փաստերից հետո ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Տնոյանի կողմից 31 մարտ 2019թ-ին որոշում է կայացվել թիվ 14201718 քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդում չիրականացնել՝ պատճառաբանելով, որ Լարիսա Կատասանովայի և Հարության Գալենցի արարքի մեջ բացակայում է հանցակազմը:

Քննիչը փորձել է որոշումը հիմնավորել այն հանգամանքով, որ դատաապրանքագիտական փորձաքննության եզրակացությամբ պատճառված վնասի շուկայական արժեքը հնարավոր չի եղել որոշել, հետևապես կողմերի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ և 185-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները:

Որոշումը կայացնելիս գնահատման առարկա չի դարձվել այն հանգամանքը, որ Կատասանովայի կողմից միտումնավոր, գիտակցաբար ուղղակի դիտավորությամբ կատարվել է ինքնիրավչություն՝ իր ենթադրյալ իրավունքների ինքնակամ իրականացմամբ բարոյական և նյութական էական վնաս է պատճառել քրոջս և իմ իրավունքներին և օրինական շահերին:

Վերջինս ինքնագլուխ առանց մյուս համասեփականատերերի կարծիքը հաշվի առնելու վնասել է համասեփականության իրավունքով պատկանող գույքը, բացի այդ ինքնագլուխ գրկել է ինձ և մյուս համասեփականատերերին իրենց գույքի տնօրինումից և տիրապետումից:

Քննիչի կողմից Կատասանովայի արաքին միտումնավոր համապատասխան որակավորում չի տրվել՝ պատճառաբանությամբ, որ կողմերը համասեփականատերեր են: Ճիշտ չի գնահատվել կողմերի արարքները, միտումները:

Այս գործով էլ քննիչի կողմից 31 մարտ 2019թ-ին կայացված որոշումը բազմաթիվ բողոքներից և պահանջներից հետո ստացել էմ 24 հուլիս 2019թ-ին:

29 հուլիս 2019թ-ին որոշումը բողոքարկել էմ ՀՀ Դատախազության Արաբկիր և Քանանքեռ-Ջեյթուն վարչական շրջանների դատախազություն:

Բողոքը մերժելու մասին որոշմամբ դատախազությունը արձանագրվել է, որ չնայած Լարիսա Կատասանովայի գործողությունները պարունակում են ինքնիրավչության տարրեր, սակայն հանցակազմի առկայության համար պարտադիր են կատարված գործողություններից հետո վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքների առկայությունը՝ էական վնասը, որը կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական: Հատկանշանական է այն հանգամանքը, որ ապրանքագիտական փորձաքննության եզրակացության վերաբերյալ քննիչի կողմից կատարված հետևությունները վերաբերելի են ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածին, այլ վերաբերելի են ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածին:

Դատախազությունը գտել է, որ վարույթն իրականացնող քննիչի կողմից կատարվել է լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, պահպանվել են քրեադատավարական օրենսդրության պահանջները և գտել են, որ բողոքն անհիմն է, բացակայում են քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին քննիչ Տ. Տոնոյանի կողմից 31.03.2019թ. կայացրած որոշումը վերացնելու հիմքերը:

Այս գործով էլ Դատախազության կողմից չի նշանակվել կրկնակի փորձաքննություն:

2018թվականի հոկտեմբերի 01-ին կրկին հաղորդում էմ ներկայացրել ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին՝ հանցագործության մասին, հայտնելով, որ Երևան քաղաքի Հարություն Կալենցի անվան փողոցի վրա գտնվող Հարություն Կալենցի անվան տուն-թանգարանում Լարիսա Կատասանովայի կողմից կատարվում է ինքնիրավչություն՝ վերջինս գողելով տուն-թանգարանի երկաթյա դուռը արգելում է որպեսզի մուտք գործեմ բաժնային սեփականության իրավունքով ինձ պատկանող տուն-թանգարան: Միայնակ է տնօրինում, տիրապետում պապիս՝ Հարություն Կալենցի, տատիս՝ Արմինե Կալենցի և հորս՝ Սարո Գալենցի կողմից թողած ժառանգությունը: Արմինե Կալենցից, ամենա քիչը 457 գործ, որից 191-ի լուսանկարը ներկայացվել է, Հարություն Կալենցից ամենա քիչը 355 գործ, որից 342-ի լուսանկարները ներկայացվել է, Սարո Գալենցից ամենա քիչը 195 գործ, որոնք ամբողջությամբ ներկայացվել է լազերային կրիչով, ամբողջ թվաքանակը վերաբերում է և կտավի և թղթի վրա գործերին:

Իմ գործերը՝

1/ Իմ կողմից թանգարանի համար պատրաստված և ֆինանսավորված 2000թվականին լույս տեսած կատալոգներ նվիրված Հարություն և Արմինե Կալենցիներին և 6 տեսակի տարբեր բացիկներ, որոնք մինչև վերջերս վաճառվում էին թանգարանում

2/ իմ անձնական ստեղծագործությունները՝ 23 հատ գործ

3/ երեք թղթապանակ իմ մանկական գործերով

4/ իմ կողմից գնված Կարինե Մացակյանի կողմից նկարված կտավ՝ յուղաներկ

Քրոջս՝ Անի Նիկոլ Գալենցի կողմից կատարված մանկական նկարներ և 1 ձեռագործ շրջանակի մեջ:

Մորս՝ Նագելի Նիկողոսյանի անհատական գործերը՝ մեկ ամբողջ թղթապանակ մոտ 40 գործ:

Մորական կողմի պապիս՝ քանդակագործ՝ Նիկոլայ Նիկողոսյանի անհատական 2 քանդակ :

Երվանդ Քոչարի կողմից կատարված քանդակը՝ տարածական, գուաշային աշխատանք թղթի վրա և գծանակար:

Հայտնի քանդակագործ Արտո Չակմակչյանի կողմից արված 2 քանդակ շամոտից /կավի/,

Հ. Կալենցի դիմանկարը՝ շամոտից, վերացական քանդակ մետաղից:

Հ. Կալենցի ռեալիստական դիմաքանդակը ներկված գիպսից 1950-ական թվականների՝ կատարված Ալիս Մանուկյան անվամբ քանդակագործի կողմից :

Հ. Կալենցի դիմաքանդակը սպիտակ գիպսից առայժմ Հ. Գալենցին անհայտ քանդակագործի կողմից կատարված:

Բենիկ Պետրոսյանի կողմից բռնզե քանդակ:

Բռնզե քանդակ կատարված Ֆրանսիացի արվեստագետի կողմից, որը տատս՝ Արմինե Կալենցն էր բերել Փարիզից:

Կապարից աղջկա մերկ քանդակ՝ ամբողջական:

Արմինե Կալենցի Դիմանկար կատարված Սամվել Մարությանի կողմից 1993թ-ին

30 գործ՝ կտավ և թղթի վրա 20-րդ դար, տարբեր արվեստագետների գործեր, որոնք 1946 թվականին Կալենցները Լիբանանից բերել են ՀՀ:

Նշանավոր գեղանկարիչ՝ Ռոբերտ Էլիբեկյանի փայտե ձու՝ նվիրված Ջատկի արարողությանը :

Ճապոնական 1 հատ քսիլոգրաֆիա / փայտից թղթի վրա տպագրություն /,

Աֆրիկյան քանդակ՝ դիմակ,

Հին կուժերի հավաքածու՝ կավից և մետաղից, որոնց մեջ կար նաև Հին ՌԻրարտական կավամաններ,

2 մեծ սունդուկ բերված 1946թ-ին Լիբանանից:

Հերակլեսի կամ Ապոլոնի պատկերը գծանկար թղթի վրա 17-19 դար:

26.09.2018թ-ին տեղեկացել էմ, որ «EBA Y» կայքում տեղադրվել է անձնական գործս՝ վաճառքի նպատակով, որն անձամբ գնել էմ, գործը գտնվելիս է եղել տուն-թանգարանում:

Խնդրել էմ՝ քրեական գործ հարուցել Լարիսա Խաչիկի Կատասանովայի նկատմամբ:

Տուն-թանգարանում գույքագրում կատարել, արգելանք կիրառել ցուցակագրված գույքի նկատմամբ, որպեսզի վերջինս չկարողանա կտավները սև շուկայում վաճառել, որոնք ազգային արժեքներ են, ինչպես նաև պարտավորեցնել, որ տրամադրի հորս անվամբ գրանցված ջիպ տոյոտա «Ռաֆ 4» ավտոմեքենայի փաստաթղթերը և հայտնի որտեղ է պահում՝ ռետրո կաբրիոլետ «Ֆիատ» մակնիշի ավտոմեքենան, քանի որ այն սեփականության իրավունքով մեծամասնությամբ պատկանում է ինձ, մորս, քրոջս, սակայն իրավունքի պետական գրանցում չեմ կարողանում կատարել՝ ավտոմեքենայի բացակայության պատճառով: Ինչպես նաև պարտավորացնել, որպեսզի հետ վճարի 600 Եվրո գումարը, քանի որ այն ծախսվել էմ ՀՀ գալու և ըստ պայմանավորվածության 2018թվականի սեպտեմբերի 25-ին գույքագրում կատարելու համար: Այդ պայմանավորվածությունը Լ. Կատասանովայի հետ ձեռք է բերվել 2018թվականի օգոստոսի 20-ին, իր երկու փաստաբանների և այլ վկաների ներկայությամբ, բանավոր ձեռք բերված պայմանավորվածությունը տեսանկարահանվել է:

18 հոկտեմբեր 2018թ-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ՝ Օ. Շախկոնյանի կողմից որոշում է կայացվել՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Որոշումը բազմաթիվ պահանջներից հետո իմ փաստաբանը ստացել է 24 դեկտեմբեր 2018թվականին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման մեջ հետաքննության բաժանմունքի տեսուչը նշել է Լ. Կատասանովայի կողմից գրված բացատրությունները՝ մասնավորապես, որ Հ. Գալենցի կողմից հաղորդման մեջ նշված գործերի և իրերի ցանկից Նիկոլայ Նիկողոսյանի 2 քանդակ դեռևս իր կենդանության օրոք տնօրինել է Սարո Գալենցը, բայց Երվադ Քոչարի թվով 2 գրաֆիկական աշխատանքները առաջինը՝ «Անտեսված իրականի,» կատալոգի միջից պատկանում է այլ անձի և երբեք Ս. Գալենցին չի պատկանել, իսկ ձիու գլուխ պատկերված գրաֆիկական աշխատանքի մասին որևէ տեղեկություն չունի....., նշել է նաև որ 2018թվականի մայիսի 11-14-ը «Կալենց» մշակութային հիմնադրամը կայանալիք «Արտ Էքսպո» տոնավաճառի ցուցահանդեսում առանձին տաղավարով ներկայացրել է Սարո Գալենցի կտավները... ներկայացված կտավները Արմեն Կալենցը լիազորագրով օգտագործման իրավունքով փոխանցել էր իրեն, քանի որ ինքը հանդիսանում է «Կալենց» մշակութային հիմնադրամի տնօրեն, հայտնել է, որ Հ. Կալենցի կողմից նշված արգելանքը վերաբերվում է Ա. Կալենցին, ինքը և հիմնադրամը բնականոն գործունեություն ծավալելու արգելանք չեն ունեցել:

Հետաքննիչի կողմից որոշում կայացնելիս անտեսվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Շահնազարյանի կողմից տրված կատարողական թերթը, համաձայն որի՝ Կատասանովային (ով իր աղջկա՝ Արմինե Գալենցի հետ ապրում է տուն- թանգարանում) արգելվել է թանգարանում գտնվող կտավները տնօրինել, տիրապետել:

Նշվածի հիմքով որոշում է կայացվել, որ «փաստական տվյալ ձեռք չի բերվել այն մասին, որ Կատասանվածն ղեկավարությամբ Հ. Գալենցին չի հանձնում նրան պատկանող գույքը, վերջինս պատրաստականություն է հայտնել վերադարձնել, եթե այդպիսիք կան, իսկ ինչ վերաբերում է Հ. Գալենցի կողմից նշված մյուս նկարներին, ավտոմեքենաներին և կտավներին, ապա դրանց որոշ մասը մտնում է ժառանգական զանգվածի մեջ, այդ մասով կողմերի միջև առկա է քաղաքացիական վեճ, որի լուծման դեպքում կլուծվի նաև դրանց տնօրինման հարցը, իսկ որոշ մասի վերաբերյալ համաձայն տրված բացատրության Կատասանվածն տեղեկություն չունի, որն է փաստական տվյալ ձեռք չի բերվել նաև Կատասանվածի կողմից Հ. Գալենցին պատկանող կտավները վաճառելու, կամ ընդհանրապես կտավներն այլ աշխատանքները տեղափոխելու մասին, հետևապես Կատասանվածի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը, և որոշել՝ Հարություն Սարոյի Գալենցի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժել՝ Լ. Կատասանվածի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով: »

27.12.2018թ-ին որոշումը բողոքարկվել է Երևան քաղաքի դատախազություն, որով հայտնվել է, որ Շախկույանի կողմից հանցագործությունը քողարկվել է, ոչ թե բացահայտվել, կամ վերջինիս մոտ բացակայում է համապատասխան մասնագիտական գիտելիքները, մասնավորապես՝ քննություն չի կատարվել այն ուղղությամբ թե Կատասանվածի կողմից նշված «Անտեսված իրականը» կատալոգում առկա Քոչարի կողմից պատկերված գունավոր գրաֆիկան ում է պատկանել, եթե ոչ Սարո Գալենցին, որպես թանգարանի տնօրեն թանգարանի գրքում այդ մասին գրանցում կատրել է թե՛ ոչ, արվեստի կտորը թանգարանին էրբ է հանձնվել ցուցադրության, որքան ժամանակով, քանի որ այդ կատալոգը տպվել է 2016թ-ին «Կալենց» թանգարանում կազմակերպված ցուցահանդեսի կապակցությամբ և Ս. Գալենցի մահից հետո Երվանդ Քոչարի գրաֆիկան եղել է Կալենցի 18 հասցեի տանը / ապացուցր հաղորդման հետ ներկայացվել է /:

Եթե այս հարցերի շուրջ քննություն կատարվեր կպարզվեր, որ Կատասանվածի կողմից սուտ բացատրություն է տրվել, կբացահայտվեր հանցագործությունը և կպարզվեր որտեղ է գրաֆիկան, ում կողմից է այն վաճառվել և ում:

Քննություն չի կատարվել նաև այն հանգամանքի շուրջ, որ Երվանդ Քոչարի կողմից արված թանկարժեք գրաֆիկական աշխատանքը «ձի» անվամբ, որտեղ պատկերված է ձիու գլուխ, Սարո Գալենցի կենդանության օրոք գտնվելիս է եղել տանը և Քոչարի գործերից երկուսը կախված են եղել Գալենցի ննջասենյակի պատին՝ հեռուստացույցի երկու կողմերում, փաստը ապացուցում է «Հ 2 հեռուստաընկերության» կողմից «Չէին սպասում» հաղորդաշարը, երբ 2017թ-ի մարտ ամսին հյուրընկալվել էր Կալենցի տուն- թանգարանում, Կատասանվածն կանգնած էր գրաֆիկական աշխատանքների կողքին, իսկ ոստիկանությունում սուտ բացատրություն տալով հայտել է, որ այդ գործերի վերաբերյալ տեղեկություն չունի / տես էք <https://www.youtube.com/watch?v=KbqpOx4a84s> կայքով ամբողջ հաղորդումը, որտեղ ավելի մանրամասն ինֆորմացիա կա/:

Քննություն չի կատարվել և Կատասանվալի կողմից որպես ապացույց չի ներկայացվել ժառանգական զանգվածի վերաբերյալ թե քաղաքացիաիրավական հայցերով դատարանում ինչ գործեր են քննվում, որոնցից էլնելով վերջինս խուսափել է պատասխանել առաջադրված հարցերին:

2018թ-ի մայիսի 12-ին տեղեկանալով, որ կտավները ցուցադրվում են «Արտ Էքսպո»-ում դիմել է Արաբկիրի ոստիկանություն, որպեսզի միջոցներ ձեռնարկվի կտավները չվաճառելու ուղղությամբ, քանի որ ոչ աշխատանքային օրեր էին և ԴԱՀԿԾ չէր կարող գործողություն կատարել:

Եթե Շախկուլյանի կողմից կատարվեր բազմակողմանի քննություն, ապա վերջինս զրկված չէր Արաբկիր ոստիկանությունից պարզեր հենց այս հարցի պատասխանի իսկությունը:

Որպես ապացույց, որ թանգարանին պատկանող կտավները, որոնք գտնվում են արգելանի տակ վաճառվում են, ներկայացվել է կոլեկցիոներ Արթուրի կողմից ինձ ուղարկված հարցումը WhatsApp, որտեղ վերջինս փորձում է պարզել վաճառվող կտավը՝ «Գյուղական բնանկար» 1962թ-ի, որը պատկանում է թանգարանին և պատկերված է մեծ Հ. Կալենցի կողմից ինքն է թե՛ կեղծված է:

31 հունվար 2019թվականին ՀՀ դատախազության Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունից ստացվել է որոշում՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի հետաքննիչ Օ. Շախկուլյանի 2018 թվականի հոկտեմբերի 18-ի նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ Հարություն Գալենցի փաստաբան Թեհմինե Հովսեփյանի կողմից բերված բողոքը մերժել՝ անհիմն լինելու Պատճառաբանությամբ:

Բողոքը մերժելու մասին որոշմամբ դատախազությունը նշել է, որ 18.10.2018թ-ին որոշումը կայացվել է նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ Լ. Կատասանվալի արարքում հանցակազմի բացակայության հիմքով, այնուհետև՝ պատճառաբանել, որ հետաքննության տեսուչի կողմից նյութերի նախապատրաստման ընթացքում կատարվել են դատավարական տվյալ փուլի համար անհրաժեշտ և հնարավոր բոլոր գործողությունները, որի ընթացքում ձեռք բերված տվյալները բավարար չեն եղել հանցագործության փաստի առկայությունը հաստատված համարելու համար:

Սակայն ինչ գործողություններ է կատարվել վկայակոչված չէ:

Չէր կարող վկայակոչվել, քանի որ որևէ գործողություն չի կատարվել:

Որոշումները բողոքարկել եմ դատական կարգով:

2019թ-ի մարտի 15-ին, ապրիլի 10-ին, մայիսի 14-ին, մայիսի 30-ին նշանակված նիստերին չեն ներկայացել դատախազը, հետաքննիչը և ոչ էլ նյութերն են ուղարկել դատարան: Փետրվարից մինչև հունիս ամիսը դատական նիստերը տեղի չեն ունեցել, գործի նյութերը դատարան չուղարկելու և գործը հսկող դատախազի, հետաքննիչի կողմից նիստին ներկա չգտնվելու արդյունքում:

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

բողոքներիս լուրջ չեն վերաբերվում իրավապահ մարմինները, չեն ուսումնասիրում բովանդակությունը, որպեսզի հասկանան հարցի լրջությունը, այլ միայն վկայակոչում են հողվածներ, որոնք ընդհանրապես չի կիրառվում ՀՀ-ում, ինչին համոզվեցի ես այս տարիներ ընթացքում:

Արդարադատություն իրականացնող մարմիններին ավելի հեշտ է մերժել բողոքները, քան օրենքի տառին համապատասխան որոշումներ կայացնել, ինչի արդյունքում ստիպված իրավունքներիս և մշակույթի պահպանման հարցով դիմում եմ Ձեզ:

Խնդրում եմ քրեական գործ հարուցել ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի այն քննիչների նկատմամբ, որոնց կողմից իբր քննություն է իրականացվել իմ բողոքների շրջանակներում՝ պաշտոնական անփության կապակցությամբ՝ որոշումները միտումնավոր չտրամադրելու և ոչ օբյեկտիվ քննություն անցկացնելու համար:

Քրեական գործ հարուցել Երևան քաղաքի ՀՀ Դատախազության Արաբկիր և Քանանքեռ Ձեյթուն վարչական շրջանների այն դատախազների նկատմամբ, որոնք գիտակցաբար հաստատել են քննիչների կողմից կայացրած անօրինական որոշումները և առանց համապատասխան կրկնակի փորձաքննությունների նշանակման մերժել իմ փաստաբանի բողոքները, ինչպես նաև փորձաքննության լրիվ և օբյեկտիվ իրականացման համար «նվիրատվության պայմանագիրը» չեն առգրավել՝ փորձաքննության ներկայացնելու, ինչի արդյունքում գործը դիտավորյալ ձգձգվել և կայացվել է անօրինական որոշում:

Քրեական գործ հարուցել նաև ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի հետաքննության բաժանմունքի տեսուչ՝ Օ. Շախկուլյանի նկատմամբ՝ անգործության և պաշտոնական դիրքի չարաշահման, իր կողմից կայացրած որոշումը միտումնավոր չտրամադրելու համար:

Խնդրում եմ նկատի ունենալ, որ թե՛ ազգային և թե՛ սփյուռքահայ մամուլն անդրադարձել է այս խնդրին և ուշի ուշով հետևում է ընթացքին:

Տեսե՛ք հետևյալ հղումները՝

Հաղորդումը Հ1 ալիքով – 13.07.2019 <https://galentz-research.org/galentz-lagacy/>

«Առավոտ» թերթի հողվածը – 21.08.2019 <https://www.aravot.am/2019/08/21/1061605/>

Ֆակտոր TV-ի հաղորդումը – Գերմանալեզու «ADK» ամսագրի հողվածը – Nr.182 01.03.2019 <https://galentz-research.org/publications/>

Նույն հողվածի թարգմանությունը անգլերեն՝ ԱՄՆ-ում լույս տեսնող Armenian Mirror Spectator – 4.04.2019 <https://mirrorspectator.com/2019/04/04/the-debate-about-culture-and-the-culture-fdebate/?fbclid=IwAR1cSjsnnvEiGB78tjBzBIC7dnoyGFXCurNkXoW1Vu2I3qkzayjdKNUFUfk>

Նույն հոդվածի թարգմանությունը հայերեն՝ Պրագայի «Օրեր» ամսագրում – 15.06.2019
<http://orer.eu/hy/allcategories-hy-am/72-hy-am/6752-archi-galentsarticle.html?fbclid=IwAR2QngjLfBdBs4qss-t1c0wssah7OA0SJ58heeE50NHrvwAioahZ6DpjrPs:>

Բոլոր նյութերը, ինչպես նաև քաղաքացիական և քրեական գործերի ընթացքը, հավաքվում են և ներկայացվում են հետևյալ վեբ կայքի վրա: Տեսե՛ք՝ <https://galentz-research.org>:

Ես և քույրս՝ Անի Նիկոլ Գալենցը պահանջում ենք օրենքի համապատասխան լուծում տալ՝ ազգային բարձր մշակութային արժեքների ազատումը բոլոր խարդախների՝ մահացած հորս ստորագրությունը կեղծելու պատրաստ դեյիտանտների ձեռքից:

Ես և քույրս, որպես օրինական ժառանգներ պատրաստ ենք ժառանգության զգալի մասը նվիրաբերել հայ ժողովրդին, պատրաստ ենք ջանքեր չինայելով վերակառուցել տուն-թանգարանը նոր ժամակակից պահանջներին համապատասխան՝ ուսումնասիրական կենտրոն հաստատելով, ինչի մասին ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության հարցերով փոխնախարար՝ Խաչատրյանի հետ բանակցությունների մեջ ենք գտնվում:

Հարգանքով՝

Արչի Հարություն Գալենց



«5» 3. 2020թ. Բեռլին, Գերմանիա